ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 172-Ա
« 24 » ՀՈՒՆԻՍԻ 2025Թ.

«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՌԻՆԴԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ԱՇՈՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀՐԱՅՐ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության, տնօրենի նշանակման և բողոքարկման, փորձաշրջանի սահմանման կարգը հաստատելու մասին» թիվ 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ, 5-րդ, 6-րդ կետերով, հիմք ընդունելով Աշոտ Թադևոսյանի հետ կնքած 2020 թվականի հունիսի 25-ի N439 աշխատանքային պայմանագրի 6-րդ բաժնի 6.1 կետի «ա» ենթակետը և Հրայր Գրիգորյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «ՀՀ Վայոց ձորի մարզի Ռինդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Աշոտ Թադևոսյանի լիազորությունները դադարեցնել՝ լուծել նրա հետ կնքած 2020 թվականի հունիսի 25-ի N439 աշխատանքային պայմանագիրը: Աշխատանքային վերջին օրը համարել 2025 թվականի հունիսի 25-ը:
2. Հրայր Գրիգորյանին նշանակել «ՀՀ Վայոց ձորի մարզի Ռինդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, մինչև օրենքով սահմանված կարգով թափուր պաշտոնի հիմքի վերացումը: Աշխատանքը սկսել 2025 թվականի հունիսի 26-ից:
3. «ՀՀ Վայոց ձորի մարզի Ռինդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
4. Հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել հաստատության նյութական պատասխանատու անձանց:
5. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք. Եղեգնաձոր

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2025թ հունիսի 24 -ի
N 172 -Ա որոշման

«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՌԻՆԴԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-ՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ՝

Վահան Աբրահամյան — ՀՀ Վայոց ձորի մարզպետի խորհրդական

Անդամներ՝

Գվիտոն Դավթյան — ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությունում փորձագետ

Մայիս Նազարյան — ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունում խորհրդական՝ առանձին գործառույթներ համակարգող